

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 81

Հիմա որ Ադամ Աստծոյ հետ ուխտի պայմանները խախտեց, եւ իր հնազադուութեամբ յաւիտեանական կեանք ստանալու առիթը կորցրեց, հարցումը որ ծագում է այս է թէ «Արդեօք գործերի ուխտը դեռ կայո՞ւն է կամ տակաւին իգօրո՞ւն է, թէ այն ամբողջովին բեկանեց, չեղեալ համարեց, երբ Ադամը մեղանչեց:»

**Գործերի ուխտը իգօրու է այսօր** – Ինչպէս նախապէս ասացինք, այս ուխտի պայմանը կատարեալ եւ անհատական հնազանդութիւն էր: Որովհետեւ Ադամը ստեղծել էր որպէս բոլոր մարդկութեան դաշնակցային գլուխը, այն ուխտը որն Աստուած հիմնել էր Ադամի հետ իրականութեան մէջ նաեւ հիմնեց նաեւ նրա սերունդի հետ: Ուստի կատարեալ հնազանդութեան կոչը սահմանաւճ չէր միմիայն Ադամին, ու այսպիսով այն խախտելուց նրա անկումով, այլ ընդհանրապէս նրա երկարեց բոլոր մարդ արարածներին, եւ ուրեմն այդ դեռ մնում է որպէս Աստծոյ պահանջը բոլոր մարդկութիւնից (Գաղատացիս 3:10 ք): Աստծոյ բարոյական օրէնքի կատարեալ հնազանդութիւնը միշտ եղել է ու միշտ էլ կլինի Աստծոյ հանդէպ մարդու պարտաւորութիւնը, որովհետեւ այդ Աստծոյ ուղղարար նկարագիրն ու Նրա չափանիշն է ներկայացնում (Եբրայեցիս 12:14, Յայտնութիւն 22:14-15):

Ու իրականութիւնը որ Ադամն ընկաւ ու բոլոր մարդկութիւնն էլ նրա հետ, ու նաեւ թէ այժմ նրանք ծնունդ են հոգեւորապէս պղծւած դա չի խախտում ուխտի պահանջը ոչ էլ ազատ արձակում մարդուն իր պարտաւորութիւնից: Բոլոր մարդիկ ամէն տեղ իրենց սրտում իմանում են որ նրանք հաշտուել են Աստծուն եւ պարտական են մատուցել կատարեալ հնազանդութիւն իրենց Արարչին (Հռովմայեցիս 2:14-15): Մենք բոլորս գործերի ուխտի անդամներն ենք: Ուստի այս իմաստով մարդկութիւնը տակաւին կապած է գործերի ուխտով ու պարտական է կատարելապէս հնազանդել Աստծուն:

Առաւել Աստծուց սպանուած ուխտի անէծքը մահ էր, որը պատահեց Ադամին ու Եւային երբոր նրանք մեղանչեցին (Հռովմայեցիս 6:23): Գործերի ուխտի անէծքը մնում է Ադամից բնականաբար սեռած բոլորի վրայ, որոնք ծնունդ են որպէս մեղաւորներ, եւ գործերի ուխտը խախտողներ: Այդ պատճառով է որ բոլոր մարդ արարածները, առանց բացառութեան, մեռնում են (Հռովմայեցիս 5:12): Մահը ուխտի խախտման պատիժը կամ անէծքն է: Ուրեմն այս իմաստով էլ գործերի ուխտը դեռ վաւերական եւ իգօրու է այսօր:

**Գործերի ուխտը անգօր է այսօր** – Ադամը ինքին իրեն մի եզակի կացութեան մէջ գտաւ, երբ նա մի փորձի կամ ֆննութեան շրջանի մէջ էր: Որպէս մարդկութեան ներկայացուցիչը, երբ Ադամը մտաւ ֆննութեան շրջանի մէջ, նրա հետ նաեւ մտան բոլոր մարդկութիւնը, եւ երբ Ադամն ընկաւ, նրա հետ նաեւ ընկան բոլոր մարդկութիւնը: Ուրեմն այս ֆննութեան շրջանը մէկ անգամ ընդ միշտ մի շրջան էր որն փակեց երբոր Ադամը մեղանչեց:

Մարդ արարածները չեն անցնում իրենց անհատական ֆննութեան շրջանից: Նրանց ֆննութիւնը լրացեց Ադամում, նրանց ներկայացուցչի մէջ: Նաեւ Ադամն այս ֆննութեան մէջ մտաւ որպէս բարոյապէս ուղղարար էակ, Աստծոյ կամքը կատարելու կարող եւ վայելող մի էակ: Իսկ անկամն հետեւանքով նրա սերունդը որեւէ այսպիսի կարողութիւն կամ փափաք չունեն:

Ու թեւէ համարներ ենք կարդում ուր Աստծոյ պատուերները պահող անձին կեանք է խոստացել (Ղեւտացիս 18:5, Հռովմայեցիս 10:5, Գաղատացիս 3:12, Մատթէոս 19:16-17), սրանք ընկած մարդուն մի երկրորդ ֆննապարհով կեանք ստանալ չեն ներկայացնում, այլ ինչպէս Հաջըզն է ասում «Սա միմիայն ասում է որ յաւիտեանական արդարութեան սկզբունքները դեռ իգօրու են: Եթէ որեւէ մի մարդ կարող լինի ինքն իրեն ներկայացնի Աստծոյ չափանիշի առջեւ ու փաստի որ նա անմեղ է, համարած կամ անձնական, նախնական կամ իրական անմեղութեամբ, նա չի դատապարտուի:»

Բայց ինչպէս որ Աստուածաշունչն է սովորեցնում Ադամի բնական սերնդից ոչ մէկը կարող է այսպէս անել: Անկման հետեւանքով մարդը աշխարհ է գալիս մի պղծւած բնութեամբ որ միայն չարութիւն է փափաքում: Ուրեմն անկարելի է ընկած մարդուն գործերի ուխտի միջոցով յաւիտեանական կեանք ձեռք բերել: Ոչ միայն օրէնքը անգօր է փրկելու մեղաւորներին, այլ փոխարէն այն յայտնաբերում է մարդու պղծութեան ու գարշտութեան խորքը, ու բոլոր մարդկութեան Աստծոյ առաջին որպէս յանցապարտներ է դատապարտում (Հռովմայեցիս 3:20, 7:10, Գաղատացիս 3:10-11): Դժարութիւնը օրէնքը չի, որովհետեւ օրէնքը Աստծուց է եւ սուրբ է (Հռովմայեցիս 7:12): Դժարութիւնը մարդն է:

Ադամն ու Եւան միայն անհատներն էին որոնք առիթ ունէին իրենց գործերի հիման վրայ կեանք ստանալին: Ուստի այս իմաստով, որպէս յաւիտեանական կեանքի միջոց, գործերի ուխտը այլեւս կայուն եւ իգօրու չի: